ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.08.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/67

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Դամկար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 31.07.2020թ.),

««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Կ. Դրամբյանի (լիազորագիր, տրված՝ 07.08.2020թ.),

քննելով ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Դամկար» ՍՊԸ-ի կողմից 31.07.2020թ. ներկայացված (03.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/67 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Դամկար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Դամկար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 31.07.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Համաձայն Ընթացակարգի Հրավերի՝

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Ա. Արմենակյան 108/4. հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 12:00-ն:

Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն: Հայտերի բացումը տեղի կունենա ք. Երևան, Ա.Արմենակյան 108/4 հասցեում, 27.07.2020թ. ժամը 12:00:

Բողոքաբերը սահմանված ժամկետում, ներկայացրել է սոսնձված, փակ ծրարով կնիքված հայտը՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի քարտուղարին /պատճեն կցվում է/:

Սակայն 27.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակիցների հայտերի ծրարները կազմված են հրավերով սահմանված կարգին համապատասխան՝ բացառությամբ «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ծրարի: Նշված ծրարը ստորագրված չէր Մասնակցի կողմից: Հանձնաժողովը որոշեց մերժել «Դամկար» ՍՊԸ-ի հայտը՝ ծրարը հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան կազմված լինելու հիմնավորմամբ և փակ ծրարը վերադարձվել է այն ներկայացնողին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Դամկար» ՍՊԸ-ն՝ իր կողմից լիազորված ներկայացուցչի միջոցով՝ սահմանված ժամկետում՝ 11.30-ին ներկայացրել է մասնակցության հայտի ծրարը՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողի քարտուղարին, մինչդեռ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը վերցվել է, պահվել գնահատող հանձնաժողովի քարտուղարի մոտ և այնուհետև միայն հայտերի բացումից հետո ետ վերադարձվել ներկայացուցչին, այնինչ՝ լիազորված ներկայացուցիչը լիազորվել էր նաև «Դամկար» ՍՊԸ-ի անունից ստորագրել փաստաթղթեր և եթե Ընթացակարգի քարտուղարը՝ «Դամկար» ՍՊԸ-ի ծրարը ի սկզբանե հայտներ, որ ծրարը չի ընդունվի Պատվիրատուի կողմից, քանի որ այն ստորագրված չէ, ապա լիազորված ներկայացուցիչը մի քանի վայրկյանի ընթացքում կվերացներ այդ անհամապատասխանությունը, չնայած այն հանգամանքի, որ ծրարը չստորագրելու վերաբերյալ որևէ կետ չկա սահմանված Հրավերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք քննարկել նաև այն հարցը, որ այս պարագայում՝ կարծես թե միտումնավոր այն պահվել է գնահատող հանձնաժողովի մոտ և միայն հայտերի բացումից հետո ետ վերադարձվել ՍՊԸ-ին, այն էլ արձանագրելով հետևյալը՝ մասնակիցների հայտերի ծրարները կազմված են հրավերով սահմանված կարգին համապատասխան՝ բացառությամբ «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ծրարի: Նշված ծրարը ստորագրված չէր Մասնակցի կողմից: Հանձնաժողովը որոշեց մերժել «Դամկար» ՍՊԸ-ի հայտը՝ ծրարը հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան կազմված լինելու հիմնավորմամբ, մինչդեռ Հրավերով ծրարը ստորագրելու պարտավորության մասին որևէ կարգավորում առկա չէ և անհասկանալի է, թե գնահատող հանձնաժողովը «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ծրարում՝ հրավերով սահմանված ինչ պահանջների անհամապատասխանություն է արձանագրել: Մինչդեռ ինչպես արդեն նշել ենք, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը իմպերատիվ պահանջում է, որպեսզի բավարար գնահատվեն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, և մերժվեն միայն

այն հայտերը, որոնք չեն համապատասխանում հրավերի կոնկրետ պահանջներին: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուժադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հրավերը չի պարունակում որևէ պահանջ առ այն, որ ծրարը մասնակցի կողմից լինի ստորագրված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել «Դամկար» ՍՊԸ-ի հայտի ծրարը հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան կազմված լինելու հիմնավորմամբ հայտը մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «Դամկար» ՍՊԸ-ի կողմից 27.07.2020թ. ժամը 11:30-ին ներկայացված հայտի ծրարը (ստորագրված է գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից) ընդունելու և հայտը գնահատելու վերաբերյալ:

Ի լրումն ներկայացված բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/67 բողոքի շրջանակներում «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումներից բացի՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուսումնասիրել մեկ այլ կարևոր հանգամանք, այն է՝ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, որի պարագայում միայն պարզ կլինի, թե ընթացակարգը կազմակերպվել է առանց

իրավական հիմքերի, որի արդյունքում կստացվի, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. ոիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր: Օրինակ՝ թիվ ՍՑ-ՆԳ-2020/74 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակցի, ուստի հնարավոր չէ արձանագրել Ֆ/Մ էդգար Հովակիմյանի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ոատիև գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ որոշեցի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.04.2020թ. թիվ 26/26-1/5124-2020 գրությամբ Ֆ/Ա էդգար Հովակիմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոսքներ քննող անձին հայտնել է, որ վերը նշված գրությամբ «Դամկար» ՍՊԸ-ն ներկայացնում է նոր հստակեցված պահանջ և խնդրում է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/67 ծածկագրով բողոքի քննության համար հիմք ընդունել բացառապես նոր հստակեցված պահանջը և խնդրել է.

պարտավորեցնել ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.08.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2.««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.08.2020թ. թիվ 08-284 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Դամկար» ՍՊԸ-ի կողմից 31.07.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/67 բողոքի, հայտնում ենք հետևյալը.

27.07.2020թ-ին ժամը 11:30-ին «Դամկար» ՍՊԸ-ի կողմից հայտ է ներկայացվել ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար: Հայտը ներկայացվել է առձեռն՝ Էմմա Չոբանյանի կողմից, գնումների համակարգողին, որը և սահմանված կարգով գրանցել է այն հայտերի գրանցամատյանում: Այնուհետև, հայտերի բացման նիստին գնահատող հանձնաժողովը գնահատել է մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ծրարների համապատասխանությունը ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին, «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ծրարի կազմման համապատասխանությունը գնահատել անբավարար և հայտը առանց բացելու վերադարձրել նիստին ներկա ընկերության ներկայացուցչին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի

2-րդ մասի համաձայն՝ «Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և

հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ»:

4-րդ մասի համաձայն՝ «Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք»:

5-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին»:

Նշված դրույթների պահանջների մասին նշումները առկա է նաև ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետում՝ հայտը պատրաստելու կարգում:

Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ»: Նույն կետի համաձայն հանձնաժողովի քարտուղարը «ստանում և հաշվառում է հայտերը»: Ելնելով նշված իրավական կարգավորումներից, ակնհայտ է, որ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի ծրարների կազմման համապատասխանության գնահատում իրականացնելու իրավունք չունի և դա գնահատող հանձնաժողովի իրավասությունն է:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

2. Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

3. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում մասնակիցը մինչև հայտերը բացելը ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում»:

Այսինքն, մասնակցի ներկայացուցիչը, ինքնուրույն, մինչև հայտերի բացումը, կարող էր սահմանված կարգով հետ վերցնել հայտը, փոփոխեր այն կամ ներկայացներ նոր հայտ՝ եթե ուներ նման լիազորություններ ընկերության կողմից:

Ինչ վերաբերվում է մասնակցի այն պնդումներին, որ խախտվել են Օրենքով սահմանված «գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում» և «պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում» սկզբունքները, ապա դա այդպես չէ, քանի որ ծրարի կազմման և դրա գնահատման վերաբերյալ կարգը ամբողջությամբ ներառված է եղել հրավերում, այն հրապարակային է, ընդհանուր բոլոր մասնաիցների համար: Ընդ որում, եթե գնահատող հանձնաժողովը ընդուներ որևէ այլ որոշում, կապված ծրարի վրա որևէ ուղղումներ կատարելու հետ, ապա այդ պարագայում կխախտվեին նշված սկզբունքները և կոտնահարվեին մյուս մասնակիցների իրավունքները:

Ելնելով վերը նշված իրավական կարգավորումներից, ակնհայտ է, որ Հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով ընդունել է մասնակցի հայտը և հաշվառել այն: Այնուհետ գնահատող հանձնաժողովը իրականացրել է հայտի ծրարի կազմման համապատասխանության գնահատում և մերժել հայտը՝ համաձայն Օրենքի պահանջների, ուստի բողոքը հիմնավոր չէ»:

Ի պատասխան Ընկերության կողմից բողոքով ներկայացված լրացման՝ Պատվիրատուն 11.08.2020թ. թիվ 08-302 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հրավերի II մասը ամբողջությամբ վերաբերում է հայտերը պատրաստելուն և կոչվում է «Հրահանգ՝ բաց մրցույթի հայտը պատրաստելու»: Հրավերի II մասի 3-րդ կետով սահմանված է «Հայտը պատրաստելու կարգը»: Հրավերի II մասի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է, որ մասնակցի կողմից ներկայացվող հայտի ծրարը պետք է ստորագրված լինի այն ներկայացնողի կողմից: Հրավերի II մասի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված են բողոքող մասնակցի կողմից մատնանշված տեղեկությունները: Հրավերի II մասի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված է <<Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ

հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Ուստի, գտնում ենք, որ իրավաչափ չէ հրավերի ամբողջ մասից առանձնացնել միայն 3.2 կետը և հայտարարել, որ ծրարի ստորագրության մասին նշում չկա հրավերում»:

Պատվիրատուն 19.08.2020թ. թիվ 08-311 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Դամկար» ՍՊԸ–ի կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2020/67 բողոքի շրջանակներում ի լրումն ներկայացրած պահանջի՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով, հայտնում ենք հետևյալը.

Հրավերով նախատեսված բոլոր գնման առարկաները ներառված են բժշկական կենտրոնի 2020 թվականի գնումների պլանում, ընդ որում դրանք ներառվել են ընթացակարգը հայտարարելուց առաջ և գնման պահանջի ծագման իրավական հիմքը առկա է, ուստի առնվազն անհասկանալի են բողոքաբեր կողմի մեկնաբանությունները և պահանջը իրավաչափ չէ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.08.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է 04.08.2020թ. թիվ 08-284 գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/67 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/67 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***20.07.2020թ.***:

2. «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***20.07.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Դամկար» ՍՊԸ-ի 31.07.2020թ. ներկայացրած բողոքը՝ լրացումներով, ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 04.08.2020թ. թիվ 08-284 և 11.08.2020թ. թիվ 08-302 գրությունները, «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am* հասցեով գործող ինտերնետային կայքն է**:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ <u>գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է</u>:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

<u>1) **պատասխանատու ստորաբաժանում,** և</u>

<u>2) գնումները համակարգող</u>

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> <u>պատասխանատու ստորաբաժանումը՝</u>**

1) <u>կազմում և հաստատում է գնման հայտը</u>, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

3) **<u>գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը</u>**: ...

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **<u>գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝</u>**

<u>1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.</u>

<u>2) հրավերի տեքստը.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 03.08.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1-11539-2020 գրությամբ դիմել է ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ խնդրելով տրամադրել ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում

(procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.08.2020թ. թիվ 08-284 գրությամբ տրամադրել է պահանջվող փաստաթուղթը:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ գնումների պլանը, ինչպես նաև Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, տեղեկագրում հրապարակվել են ***20.07.2020թ.***, այսինքն՝ նույն օրը, մինչդեռ վերոհիշյալ նորմերից բխում է, որ **պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից, հետևաբար՝ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը գնումների պլանը հրապարակելու օրը, այն է՝ 20.07.2020թ., դեռևս օժտված չի եղել գնման հայտը հաստատելու իրավասությամբ:**

Ինչպես նաև Կարգի 21-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը իրավասու չէր գնման պահանջի ծագման օրը կազմել գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովը, կազմավորվելու արդյունքում, Կարգի 31-րդ կետի համաձայն՝ իրավասու կլիներ հաստատելու գնումների հայտարարության և հրավերի տեքստը, իսկ գնումների համակարգողը իրավասու չէր իրականացնելու Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:**

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է ոչ իրավաչափ, որի արդյունքում խախտվել են ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 20-րդ, 21-րդ և 31-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/62» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**